ՍԿԵՒՌԱՅ ՎԱՆՔ

Միսաք Հ. Ճեւահիրճեան

Կիլիկիայի հայկական պետութեան ժամանակաշրջանի մեծահռչակ վանքերից մէկն է Կիլիկիայի Սկեւռայ ուխտը: Այդ վանքը հիմնուել է հաւանաբար 1073 թուականին՝ Լամբրոն բերդի վերակառուցման ժամանակ, Օշին իշխան Գանձակեցու կողմից Լամբրոն բերդի կողքին: Կարծիքներ կան, թէ Սկեւռան նախքան Օշինեանների կողմից Լամբրոն բերդը վերանորոգելը եղել է բիւզանդական եկեղեցական հաստատութիւն: Սակայն այդ մասին չկայ ոչ մի փաստ:

Սկեւռայի վանքը, կրօնական հաստատութիւն լինելուց բացի, եղել է նաեւ հայ գրչութեան տարածման կենտրոններից մէկը: Այստեղ գրուել են բազմաթիւ ձեռագիր մատեաններ: Կիլիկիայի հայկական մանրանկարչութեան եւ գրչութեան զարգացման ասպարէզում XII դարի երկրորդ կէսին Սկեւռան գրաւել է առաջաւոր դիրք: Սկեւռայի վանքում մշակուել են Կիլիկիայի հայ գրչութեան քերականական հիմունքները եւ մատեանների կազմման նորաձեւութիւնը: Սկզբում Լամբրոնի իշխանների ու Բիւզանդիայի պետական վարչութիւնների կարգադրութեամբ Սկեւռայում դասաւանդւում էր յունարէն լեզու ու քերականութիւն: Այստեղ յունարէն գրականութեան օրինաչափութիւնների հիման վրայ մշակուել են հայերէն գրչութեան նրբութիւնները, որոնք հետագայում Կիլիկիայի հայ գրչութեան որոշիչ առանձնայատկութիւնը հանդիսացան: Սկեւռայում մշակուել էին հայերէն ձեռագրերի ձայնային-շեշտային կէտադրութիւնը, քերականական սկզբունքները, որոնք դարերի ընթացքում մոռացուել էին: Փաստօրէն, Սկեւռան հայերի համար յունարէն լեզու, գրականութեան եւ գրչութեան նրբութիւններ սովորեցնող մի ուսումնարանի դեր է ունեցել:

XIII դարի առաջին կէսին Կիլիկիայի գրչութիւնը, հետեւապէս նաեւ Սկեւռայինը, որոշ չափով կորցրել էր իր առաջընթաց դերը: Դրա պատճառը Մեծն Լեւոն թագաւորի եւ Զապէլ թագուհու կառավարման շրջանում տեղի ունեցած աշխարհակալական պատերազմներն էին: Սակայն XIII դ. երկրորդ կէսին՝ Հեթում I-ի թագաւորութեան ժամանակ, երկրի խաղաղութիւնը վերահաստատուած լինելու հանգամանքի բերումով, ընդհանուր առմամբ շարունակուել էր գրչութեան վերելքը:

Սկեւռայում գրուել են բազմաթիւ ձեռագրեր, որոնց մի մասը մատնուել է կորստի սելջուկ-թուրքերի 1281 թ., 1305 թ. եւ միւս յարձակումների ու այլ պատճառների հետեւանքով: Մեզ հասած հայերէն յայտնի ձեռագրերը հետեւեալներն են.

– 1154 թ. Գէորգ վրդ. Սկեւռացին՝ տիկին Խուշմիշի եւ Ստեփաննոս քահանայի համար գրել է մի ճաշոց[1]:

– 1173 թ. Գրիգոր Մլիճեցի գրիչ-ծաղկողը՝ Ներսէս Լամբրոնացու պատուէրով գրել է Գր. Նարեկացու «Մատեան ողբերգութեան»-ը[2]:

– 1173 թ. Գրիգոր Մլիճեցին օգնականների՝ Վարդանի ու Կոստանդինի հետ Ն. Լամբրոնացու պատուէրով պատրաստել է մի գեղեցիկ Աւետարան, որը մինչեւ Համաշխարհային I պատերազմը գտնւում էր Տիգրանակերտի Սբ. Կիրակոս եկեղեցում: Այժմ այն համարւում է կորած[3]:

– 1177-1182 թթ. Սկեւռայի Սբ. Զօրաւոր եկեղեցու Աւետեաց (Աւետիք) քահանան գրել է Ներսէս Լամբրոնացու «Խորհրդածութիւնք 'ի կարգս եկեղեցւոյ...» աշխատութիւնը: Դրանից էլ 1691 թ. ընդօրինակուել է մի նոր ձեռագիր մատեան[4]:

– 1190 թ. Սամուէլ գրիչը՝ Ներսէս արքեպ. Սկեւռայի[5] առաջնորդի պատուէրով օրինակել է «Լամբրոնացու Մեկնութիւն Սաղմոսաց եւ այլն»-ը[6]:

– 1192 թ. Սկեւռայում մի ձեռագիր մատեան է գրուել[7]:

– 1193 թ. Կոստանդին գրիչ-նկարիչը Ներսէս Լամբրոնացու եւ նրա եղբայր Հեթում սեպաստոսի պատուէրով օրինակել է մի հիանալի Աւետարան[8]:

– 1197 թ. Գրիգոր Մլիճեցի գրիչ-ծաղկողը Ստեփաննոս քահանայի համար Մլիճում սկսած Աւետարանը աւարտել է Սկեւռայում[9]:

– 1198 թ. Խաչատուր վանականը իր ուսուցիչ Ներսէս Լամբրոնացու մահուան առթիւ գրել է նշանաւոր «Ողբը»[10]:

– 1198 թ. Ներսէս Լամբրոնացու պատուէրով գրուել է «Յովհաննէս Ոսկեբերան, Ճառք»-ը[11]:

– 1198 թ. գրուել է մի ձեռագիր մատեան[12]:

– 1205 թ. Պետրոս Սկեւռացի քահանան իր մերձաւորների մահից յետոյ արտագրել է «Գիրք մեկնութեան թղթոց»-ը[13]:

– 1215/6 թ. Ստեփաննոսի պատուէրով գրուել է Գրիգոր Մլիճեցի գրիչի՝ Սկեւռայում սկսած ու Տարսոնում մի անհայտ գրիչի աւարտած Նոր Կտակարանը (Նոր Զուղայի Ամենափրկիչ եկեղեցի)[14]:

– 1216 թ. Բարսեղ քահանան Կարապետ քահանայի համար գրել է «Գրիգոր Լուսաւորիչ, Ցաճախապատում Ճառք»[15]:

– 1218 թ. Սկեւռայում գրուել է մի Աւետարան[16]:

– 1263 թ. Ստեփաննոս քահանան եւ Աւգսենտ աբեղան Հայրապետ քահանայի համար պատրաստել են մի Աւետարան[17]:

– 1275 թ. Ստեփաննոս քահանան Յովհաննէս քահանայի պատուէրով որդեգիր Կոստանդին քահանային նուիրելու համար մի Մանրուսմունք գրեց[18]:

– 1278 թ. Ստեփաննոս քահանան Սկեւռայի մի այլ Ստեփաննոս քահանայի պատուէրով գրել է մի Մանրուսմունք[19]:

– 1283 թ. Ստեփաննոս քահանան Կեռան թագուհու պատուէրով գրել է մի Աւետարան[20]:

– 1285 թ. Ստեփաննոս Գոյներիցանցը Սկեւռայի Աստուածատուր քահանայի եւ Խաչատուր պատանու համար արտագրել է մի Աստուածաշունչ[21]:

– 1285 թ. Ստեփաննոս Գոյներիցանցը Գէորգ վրդ. Սկեւռացու համար գրել է մի Նոր Կտակարան[22]:

– 1290 թ. Ստեփաննոս քահանան Կոստանդնուպոլսեցի Թորոսի համար գրել է մի Աւետարան[23]:

– 1293 թ. Ստեփաննոս գրիչը Գրիգոր քահանայի պատուէրով գրել է մի Աւետարան[24]:

– 1295 թ. Կիրակոս գրիչը՝ Վարդանի համար գրել է մի Ժողովածոյ[25]:

– 1295 թ. Ստեփաննոս քահանան իր եղբօրորդի Լեւոն սարկաւագի խնդրանքով արտագրել է մի Աւետարան[26]:

– 1296 թ. Պետրոս քահանան արտագրել է «Եսայի մարգարէն եւ Պօղոսի թղթերը»[27]:

– 1298 թ. Գրիգոր քահանան Սկեւռայում ու Սիսում տէր Վարդանի համար արտագրել է «Գէորգ Սկեւռացի, Մեկնութիւն Եսայեայ»[28]:

– ԺԳ դ. Ստեփաննոս գրիչը Բարսեղ քահանայի պատուէրով գրել է «Յովհաննէս Ոսկեբերան, Մեկնութիւն Յովհաննու»[29]:

– ԺԳ դ. Սմբատ քահանան եւ Ստեփաննոս գրիչը գրել են «Կիւրեղ Երուսա-

© National Library of Armenia

ղէմացի, «Կոչումն ընծայութեան» մատեանը»[30]:

– 1314 թ. Ներսէս գրիչը Սկեւռայի առաջնորդ Կոստանդին եպս. Պեհեսնիցու պատուէրով գրել է մի Մայր Մաշտոց[31]:

– 1314 թ. Յովհաննէս գրիչը Սկեւռայի առաջնորդ Կոստանդին եպս. Պեհեսնիցու պատուէրով արտագրել է մի Հին Կտակարան[32]:

– 1324 թ. Ստեփաննոս դպիրը՝ Աբրահամ կրօնաւորի համար գրել է մի Նոր Կտակարան[33]:

– 1325 թ. Յովհաննէս գրիչը Սարգիս քահանայի պատուէրով գրել է մի Աւետարան եւ այդ մատեանը ծաղկել է Սարգիս Պիծակ քահանան[34]:

– 1349 թ. Գրիգոր քահանան իր համար Սկեւռայի Սբ. Նշան եկեղեցում գրել է մի Մանրուսմունք[35]:

Վերեւում նշուած ձեռագրերի պատկառելի թիւը, հաւանաբար, մեզ որոշ մի գաղափար կը տայ, Սկեւռայ վանքի հայ գրչութեանը մատուցած ծառայութիւնների մասին: Սկեւռայ վանքում ձեռագիր մատեաններ պատրաստելու յատուկ արհեստանոցի գոյութեան մասին չկան տեղեկութիւններ: Սակայն կարելի է ենթադրել, որ այդպիսին պիտի լինէր:

Մեզ յայտնի ամենահին Սկեւռայի ձեռագիրը կրում է 1154 թուականը: Դա նշանակում է, որ Սկեւռայ վանքի՝ հայ դպրութեանը ծառայելու գործունէութեան սկիզբը կարելի է համարել Հեթումի եւ Սմբատի (Ներսէս Լամբրոնացու) ծննդեան (1151-3 թթ.) կամ Լամբրոնի Սբ. Աստուածածին տաճարի կառուցման թուականները: Մինչ այդ (1073-1153 թթ.)՝ ութսուն տարուայ ժամանակամիջոցում, Լամբրոնի Օշինեան իշխանները եւ Սկեւռայի առաջնորդները Բիւզանդիայից կախեալ վիճակի մէջ լինելու նիւթական հնարաւորութիւնների բացակայութեան ու այլ պատճառներով հայ մշակոյթի նկատմամբ մնացել էին ձեռնպահ:

Սկեւռայի վանքը սկզբում կառուցուել է Լամբրոն բերդի երկայնանիստ քարաբլրի հիւսիսային ծայրին՝ անդունդի եզրին, բարձրահայեաց դիրքով՝ իբր մասունք պահելու «Պահարան»: Մեզ հասած ժամանակագրական տեղեկութեան մէջ խօսւում է Սկեւռայի հիմնադրման մասին, ուր պահուելու էր Սբ. Պետրոս առաքեալի մատի մասունքը. «...եւ գտեալ զանառիկս (Լամբրոն) ամայացեալ՝ շինէր ըստ կարի եւ պատրաստեաց նախ 'ի ծայր բերդիս հանգստարան սուրբ եւ գլխաւոր առաքելոյն նշխարաց[36]»: Սկեւռայ վանքի անունը ծագում է յունարէն «սկեւռոս» բառից, որ նշանակում է մասունքի պահարան: Օշին Գանձակեցի իշխանը Պետրոս առաքեալի մասունքը բերել է Հայաստանից:

Կիլիկիայում Ռուբինեան իշխանութեան հաստատման սկզբնական շրջանում (1080 թ.) Լամբրոնում ձեւաւորուել էր Օշինեան իշխանական տան հարստութիւնը: Այդ մասին հետեւեալն է գրել Սամուէլ քահ. Անեցին (1100-1185/90 թթ.). «'Ի ՇՀԲ (1124 թ.) ամին 'ի բռնութենէն Տաճկաց ել Օշին իշխանն 'ի ժառանգութենէ իւրմէ՝ որ կոչի Մայրեաց ջուրք՝ հանդէպ Գանձակայ՝ ունելով ընդ իւր զեղբայրն զՀալկամ. եւ զմայրն իւր՝ եւ զամուսինն իւր. ազատագունդ իշխանօքն եւ ամենայն գահիւն. ունելով ընդ իւր եւ զմատն սուրբ առաքելոյն Պետրոսի: Եւ եկեալ յաշխարհն Կիլիկեցւոց եւ աջողմամբ Քրիստոսի եւ սուրբ մատին առաքելոյն՝ էառ ի Տաճկաց եւ զականաւոր բերդն Լամբրոն. որ է մերձ առ ստորոտով լերինն Տօրոսի 'ի գահ մայրաքաղաքին Տարսոնի»[37]:

Լամբրոն բերդը եւ նրա քարաբլխի հիւսիսի ծայրամասում գտնուող երկրորդ յարկի սկզբնական շրջանի մասունքի պահարան Սկեւռայ մատուռը տեղադրուած էր. «... յաշխարհիս Կիլիկեցւոց՝ 'ի գլուխ մայրաքաղաքին Տարսոնի, առ ստորոտով լերինն Տորոսի, առընթեր անառ ամրոցի Լամբրաւնի յաւիթեւան հռչակաւոր ուխտ Սկեւռա, առաջի սրբոյ եւ սքանչելագործ Նշանի եւ...»: Սա համապատասխանում է այժմու Թարսուս (Tarsus) գիւղաքաղաքի հիւսիսարեւմտեան կողմը՝ ուղիղ չափումով 38 կմ հեռու, Նամրուն լեռնային գիւղին: Քարաբլխի արեւելեան կողմի ստորոտով հոսում է Նամրուն-սոյու (Կալէ-սոյու) առուակը, որը միանում է Կիւղնոս (այժմ Թարսուս-չայը, Բերդան-չայը, Κύδνος Π) գետին:

Սկեւռայի վանքը ժամանակի պահանջներին զուգընթաց ընդարձակուել է մաս առ մաս: Նախ՝ քարաբլխի բարձունքից տեղափոխուել է նրա հարաւարեւելեան կողմի ստորոտը՝ Նամրուն-սոյու առուակի տափարակ դաշտը: Այդ տեղը այժմ կոչւում է Թորոսաճուկ եւ ծածկուած է անտառներով, թփուտներով ու մացառներով: Քարաբլրի բարձունքից եւ բերդից ներքեւ նայելիս հազիւ տեսանելի են աւերակի վերածուած պարսպապատ վանքի պատերի մնացորդները: Շրջապատում կան գիւղացիների առանձնատներ եւ Դաշտային Կիլիկիայի հարուստ բնակիչների ամառանոցներ:

Օշին II իշխանը իր առաջին արու (Հեթում) զաւակի ծննդեան առթիւ 1151-3 թթ. այդտեղ կառուցում է Սբ. Աստուածածին տաճարը, ուր 1160 թուականին մանուկ Ներսէս Լամբրոնացին սկսել էր սովորել[38]: Սբ. Աստուածածին տաճարը նախ գոհացում պիտի տար Լամբրոն բերդաւանի աճող հայ բնակչութեան հոգեւոր պահանջներին: Դա լինելու էր նորակառոյց Սկեւռայ վանքի սկզբնաւորութիւնը: Բացի այդ, հաւատացեալ հասարակութեան համար դիւրամատչելի մի վայրում էր գտնուում Սբ. Աստուածածին տաճարի դիրքը:

Լամբրոնի իշխանները Սկեւռայում սկսել էին ստեղծել տոհմական դամբարան: Մինչ այդ Պապեռոնի եւ Լամբրոնի իշխանների ընտանեկան դամբարանը գտնուում էր Մլիճ վանքում: Սկեւռայի ընդարձակումից յետոյ այդտեղ թաղուում էին միայն Լամբրոնի իշխանական տան անդամները: Սկեւռայի վանքում թաղուածներից են.

– 1143 թ. Սեպաստոս Հեթում II իշխան Լամբրոնի,

– 1170 թ. Սեպաստոս Օշին II իշխան Լամբրոնի,

– 1190 թուից յետոյ Շահանդուխտ (Օշին II իշխանի կինը եւ Ներսէս Լամբրոնացու մայրը),

– 1190 թուից յետոյ Տալիթա եւ Շուշան (կուսակրօն քոյրեր),

– 1198 թ. Ներսէս Լամբրոնացի[39],

– 1263 թ. Կալամառի (Մարիամ)՝ քոյր Հեթում I թագաւորի եւ կոմսուհի Հոպպէի ու Ռամլայի (Marie countesse de Jaffe)[40]: Մահացել է Լամբրոնում եւ թաղուել Սկեւռայում:

Սկեւռայում գրուած վերոյիշեալ ձեռագիր մատեանի յիշատակարանից պարզւում է, որ 1177 թ. Սկեւռայի եկեղեցիներից մէկը կոչուել էր Սբ. Զօրավար: Սա, հաւանաբար, պիտի լինէր Լամբրոն բերդի միջի եկեղեցին, որը կցուել էր Սկեւռայ վանքի վարչութեանը: Բերդերի միջի մատուռները կամ եկեղեցիները ընդհանրապէս անուանւում էին Սբ. Զօրավար, Սբ. Գէորգ, Սբ. Թորոս, Սբ. Սարգիս եւ Սբ. Վարդան:

Ըստ 1192 թ. գրուած ձեռագրի՝ Սկեւռայ վանքի եկեղեցիները (հովանիները) եղել են. «'Ի վանքս Սկեւռայ, ընդ հովանեաւ տեառն Աստուծոյ եւ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի տաճարի մաւր Աստուածածնի եւ կենսակիր պատուական սուրբ փայտիս...»[41]: Այստեղ այլեւս չի յիշատակւում Սբ. Զօրավար եկեղեցու անունը: Իսկ 1218-1283 թթ. Սկեւռայ վանքի եկեղեցիների անունները մնացել են անփոփոխ. «...'ի մեծանուն ուխտս Սկեւռայ, ընդ հովանեաւ

© National Library of Armenia

Սուրբ Փրկչիս, լուսոյ Աստուածածնիս եւ կենսակիր Սուրբ Նշանիս, մերձ յանմատոյց դղեակս Լամբրուն, որ է 'ի գլուխ Տարսոնի եւ 'ի ստորոտ մեծի լերինս Տաւրոսի...»: Կիրակոս Գանձակեցին տեղեկացնում է, որ Ներսէս Լամբրոնացին Սկեւռայ վանքում կառուցել է մի հրաշազան եկեղեցի. «Շինեաց եւ եկեղեցի հրաշազան 'ի վանքն, որ կոչի Սկեւռայ, հուպ 'ի բերդն անառ Լամբրօն, եւ կարգեաց զպաշտօն վանիցն ըստ օրինակի...»[42]: Ն. Լամբրոնացու՝ Սկեւռայում եկեղեցի կառուցելու եղելութիւնը պէտք է հասկանալ Սկեւռայի եկեղեցիներից մէկի շքեղ կերպով վերաշինութիւն:

Սկեւռայի Սուրբ Նշան եկեղեցում, որը ծանօթ էր «կենսակիր» մակդիրով, պահւում էր ինչ-որ «կենսակիր սուրբ փայտ»: Դա Քրիստոսի խաչի փայտից մի կտոր էր, որը, իբր սուրբ մասունք, պահւում էր մեծ զգուշութեամբ: Իսկ Սկեւռայի Սբ. Ամենափրկիչ կամ Սբ. Փրկիչ եկեղեցում պահւում էին այլ սրբերի մասունքներ: Այդ մասին են վկայում այժմ Ս. Պետերբուրգի Էրմիտաժում պահւող եւ 1293 թ. Սկեւռայի առաջնորդ Կոստանդին եպս. Պեհեսնիցու պատուէրով պատրաստուած արծաթ եւ ոսկեայ ականակուռ սրբարանմասնատուփի արձանագրութեան հետեւեալ տողերը.

Զոր տամ ընձայ նուիրական:
Փառաց փրկչին տնաւրենութեն:
'Ի տաճարին իւր սրբութեն:
'Ի սբ Փրկիչն որ 'ի Սկեւռայն:
Զոր պահեսցէ տր ընդ երկայն:
Աւուր յանշարժ հաստատութեն:
Եւ զբոլոր զՀայաստան[43]:

1201 թ. Լամբրոն բերդը Լեւոն I թագաւորի կողմից խաբէութեամբ գրաւելուց եւ արքունի տիրոյթներին կցուելուց յետոյ Սկեւռան այլեւս դադարում է Լամբրոնի Օշինեան իշխանական տան դամբարանը լինելուց: Սկեւռայի գերեզմանոցում թաղուել են նաեւ Սկեւռայի աչքի ընկնող վանականներից մի քանիսը: Ենթադրւում է, որ Ներսէս Լամբրոնացու կենսագիր եւ մերձաւոր վանականներից Սամուէլ Գրիչը թաղուած է Սկեւռայի գերեզմանոցում[44]:

Սկեւռայի վանքը, լինելով Լամբրոնի բախտակիցը, բազմաթիւ անգամներ զգացել է թշնամու աւերիչ յարձակումների դառնութիւնը: Այդ պատճառով էլ վանքի շուրջը կառուցուած են եղել աշտարակներ (պուրճ) եւ պարիսպ: Այդ մասին են վկայում վերոյիշեալ Կոստանդին եպս. Պեհեսնիցու 1314 թ. գրել տուած ձեռագիր Հին Կտակարանի յիշատակարանի հետեւեալ տողերը.

«...երախտաւոր սպասաւորին իմոյ՝ Յակովբայ քահանայի, ... եւ երկու ամաւք յառաջ քան զգրել սուրբ գրոցս, փոխեցաւ 'ի Քրիստոս վասն սիրայորդոր փութոյ տաճարիս եւ յաւժար կամաւք աշխատելոյ 'ի վերակացութիւն շինութեան տաճարիս, յիշատակ նորա աւրհնութեամբ եղիցի...»[45]: Իսկ նոյն 1314 թ. Կոստանդին եպս. Պեհեսնիցու պատուիրած Մաշտոցի յիշատակարանում կարդում ենք. «...Բ[2] ամաւք յառաջ քան զգրել սուրբ գրոցս (իմա՛ 1312 թ.) փոխեցաւ 'ի Քրիստոս վասն սիրայորդոր փութոյ պրճիս եւ յաւժար կամաւք աշխատելոյ 'ի վերակացութիւն շինութեան պրճիս, եւ եթող ինձ մեծ եւ անմխիթար սուգ»[46]:

Ինչպէս տեսնում ենք, մատեաններից մէկի յիշատակարանում խօսւում է «պուրճի», իսկ միւսի մէջ՝ «տաճարի» շինութեան մասին: Սկեւռայի սոյն աւերածութիւնը պատահած պիտի լինի 1305 թ.՝ սելջուկթիւրքերի կողմից Լամբրոնի եւ Սկեւռայի վրայ կատարուած յարձակման ժամանակ: Մեծ վնասների էին ենթարկուել Լամբրոնի եւ Սկեւռայի բնակիչները: Հրկիզուել էր Սկեւռայի կառոյցների մեծ մասը: Այդպիսի յարձակումների ականատես եղաւ ԺԳ դարի երկրորդ կէսում եւ ԺԴ. դարում Լամբրոնի իշխանութեան երկրամասը: 1274 թ. Սկեւռայ վանքի աւերման մասին հետեւեալն է գրում ժամանակագիրը. «ՌՄԿԴ [1274] Հոռոմաց թուրքն այրեցին զհռչակաւոր ուխտն մենաստանի 'ի Սկեւռան, եւ գերեաց զաւագ Մլիճին՝ եւ սպան 'ի բնակչացն անձինս Զ [6]»[47]:

1281 կամ 1279 թուականին գրուած ձեռագրի յիշատակարանի բովանդակութիւնից պարզւում է, որ այդ թուականներին Սկեւռայ եւ Մլիճ վանքերը, սելջուկների յարձակումներին ենթարկուելով, այրուել են: Սկեւռայում եւ Մլիճում եղել են գերեվարութիւն եւ սպանութիւններ[48]:

Մեզ չի հասել Սկեւռայ վանքի առաջնորդների ամբողջական անուանացուցակը: Դէպքերի բերումով մեզ յայտնի են ակնաւոր մի քանիսի անունները.

– 1176-119. թթ. Ներսէս արքեպս. Լամբրոնացի[49]: //

– 1190 թ. Ներսէս արքեպս.[50]:

– 1198 թ. «Տէր Վարդան արքեպս. Լամբրունին եւ առաջնորդ Սկեւռային»[51]: Սա Մեծն Լեւոնի թագադրութեան հանդիսաւոր արարողութեան ներկաներից Վարդան Այգեկցին է:

– 1220 թ. Գրիգոր վարդապետ Սկեւռացի կամ Լամբրոնացի:

– 1285 թ. տէր Մինաս առաջնորդ Սկեւռայի[52]:

– 1296 թ. Ստեփաննոս վարդապետ Սկեւռայի: Ղ. Ալիշանը համարում է Սկեւռայի առաջնորդ[53]:

– 1291/2-1306 թթ. Կոստանդին եպս. Պեհեսնիցի:

– 1307-1311 թթ. Մարկոս վարդապետ Սկեւռացի[54]:

– ԺԲ-ԺԴ դարերի ընթացքում Սկեւռայի առաջնորդութիւնը այնքան հզօրացել էր, որ շրջակայքում գտնուող վանքերի ու եկեղեցիների հոգեւոր վարչութիւնները միացուել էին Սկեւռայի եկեղեցական վարչութեան հետ: Սկեւռայ վանքի վարչական ոլորտը տարածւում էր շրջակայ Արմէնի լեռան Յովհաննուագարակ մենաստանի, Սբ. Գէորգ անապատի, Սաղրու Սբ. Աստուածածին վանքի, Ճիրակայ անապատի, Գանձէ պուրճի եւ ընդհանրապէս Լամբրոնի իշխանութեան տարածքի սահմանների մէջ գտնուող տիրոյթների եկեղեցական հիմնարկների վրայ:

Սկեւռայ վանքի հոգեւոր վարչութիւնը աստուածաբանական, թարգմանչական, գրչութեան, քերականական եւ այլ մշակութային գործերից բացի, մինչեւ ԺԴ. դարի սկզբները թագաւորի դիւանագիտական խորհրդի կազմում զբաղուել ու գործուն մասնակցութիւն է ցուցաբերել դաւանաբանական հարցերի ուղղութեամբ:

Այժմ Սկեւռայի վանքի տեղադրումը կարելի է ճշտել՝ միջնադարեան ժամանակագրութիւնների եւ յիշատակագրութիւնների ցուցումներով առաջնորդուելով: Ս. Անեցու մօտ նշուած է. «... եւ միշտ փառաւորեալ Աստուածածնին 'ի տաճար անուան իւրոյ որ 'ի վանքս Սկեռնայ (Սկեւռայ) առընթեր բերդիս (Լամբրոնին)[55]» եւ ուրիշ մի տեղ էլ «... սուրբ ուխտս Սկեւռայ առընթեր հայրենատուր ամրոցի տէրանց մերոց Լամբրունի...»[56]:

Կիլիկիայի հայկական պետութեան անկումից (1375 թ.) յետոյ, ինչպէս Լամբրոն բերդը, այնպէս էլ նրա բախտակից Սկեւռոյ վանքը լքուեց եւ մնաց անպաշտպան: Դրա հետեւանքով էլ վանքապատկան կառոյցները ընկան բնութեան եւ աւերիչ ձեռքերի կործանարար ազդեցութեան տակ: Սբ. Աստուածածին, Սբ. Փրկիչ եւ Սբ. Նշան եկեղեցիներից եւ յարակից շէնքերից բաղկացած վանքի աւերակները սփռուած են բաւականին ընդարձակ մի տարածքի վրայ: Սկեւռայ վանքի աւերակները կը գտնուին Լամբրոն բերդի հարաւարեւելեան կողմը եւ ստորոտից կէս ժամ հեռու՝ ձորակի արեւելեան լանջին, տափարակ

© National Library of Armenia

դաշտավայրում: Վանքի հիւսիսային կողմը՝ մի քանի կմ հեռու, կը գտնուի Օշին թագաւորի կառուցած Օշինի դղեակը, որը այժմ կոչւում է Սինապ կալէ (Sinapkalesi): Այժմ Սըղըր Եայլասը (Siğir yaylâsi) կոչուող սարահարթի հիւսիսային ծայրամասում կը գտնուի Օշինի դղեակը. իսկ Սկեւռայի վանքը գտնւում էր սարահարթի արեւմտեան եզրամասում՝ ձորակի մօտ: Հիմնայատակ կործանուած վանքից մնացել են արտաքին պարիսպների մնացորդները, կիսակործան խորանի կիսագմբէթները եւ կամարների, վանքապատկան սենեակների ու խուցերի մի ընդարձակ աւերակոյտ: Հնում վանքը շրջապատուած է եղել պտղատու ծառերի պուրակով: Երկար դարերի ընթացքում աւերուած վանքի տեղում աճել են մացառներ, անպիտան թփեր ու ծառեր: Իմ այցելութեան ժամանակ Նամրուն գիւղի թուրք գիւղացիներից մէկը ինձ առաջարկեց գնել ընկոյզի ծառեր:

Սըղըր Եայլասը սարահարթը տարածւում է Լամբրոն բերդի արեւելեան կողմի ձորի միջով հոսող առուակից դէպի արեւելք՝ մինչեւ Ժեռակրի (այժմ՝ ՃէՀէննէմ դէրեսի) գետակը: Սըղըր Եայլասը-ի հիւսիսային կողմում բարձրանում է Արմէնի լեռը, ուր գտնւում էր «Արմէնի լեռան Յովհաննու ագարակ (mandra)» մենաստանը: Սըղըր Եայլասը սարահարթի անունը ծագում է XI-XIV դդ. կիլիկիացի հայերի Սաղրու կոչած տեղանունից, ուր կար «Սաղրու Սբ. Աստուածածին վանքը»՝ Սկեւռայից մէկ եւ Լամբրոն բերդից մէկուկէս ժամ հեռաւորութեան վրայ: Հնում Սկեւռայի կանգուն վանքը պարզ աչքով եւ հիանալի կերպով տեսնուել է Լամբրոն բերդից:

Լեռնային Լամբրոն (Նամրուն) բերդաւան հեշտ գնալու համար անհրաժեշտ է աւտոմեքենայով Տարսոնից (Թարսուս) դէպի հիւսիս-արեւմուտք՝ Շիւքրանիյէ եւ Քօճա Ուլաշ գիւղերի միջով հասնիլ Շամլար գիւղ (20 կմ): Ապա, այդտեղից թեքուելով դէպի ձախ (արեւմուտք), հասնել Նամրուն:

Սրանից բացի գոյութիւն ունի մի երկրորդ ճանապարհ եւս, որը Կուկլակի կիրճի (Külek boğasi) տարանցիկ ճանապարհից տանում է Նամրուն: Սրանով կարելի է Տարսոնից եւ Ադանայից Բէյ-Դէղիրմէնի (38 կմ), Կաւակլը (45 կմ), Դամլամա (60 կմ) գիւղերի միջով հասնել 65 կմ-ը ցոյց տուող նշանաքարին[57]: Այդ կէտում՝ դէպի ձախ (արեւմուտք), ճանապարհը բաժանւում է եւ հասնում Նամրուն: Այդ կէտից մինչեւ Նամրուն ճանապարհի երկարութիւնը 37 կմ է: Այդ կէտը գտնւում է Թարսուսից 39 կմ, իսկ Պոզանտըից (Pozanti) 40 կմ հեռու:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թիւ 832:

2 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թիւ 1568:

3 **Գ. Սրուանձտեանց,** *Թորոս Աղբար,* Կ. Պոլիս, 1884, հտ. Բ, էջ 442-444: **Գարեգին Ա. Կաթողիկոս,** *Յիշատակարանք ձեռագրաց,* հտ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 445: **Լ. Ռ. Ազարեան,** *Կիլիկեան մանրանկարչութիւնը,* Երեւան, 1964, էջ 55-56, **S. Der-Nersessian,** *Manuscrits arméniens illustrès,* p. 50.

4 **Բաբգէն Աթոռակից կաթողիկոս,** *Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ Ազգային Մատենադարանի Հայոց,* Անթիլիաս, 1961, էջ 908: **Յ. Թօփչեան,** *Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին,* Վենետիկ, 1962, էջ 11:

5 Սա Լամբրոնացին չէ:

6 **Հ. Աճառեան,** *Հայոց անձնանունների բառարան,* հտ. Դ, էջ 46: Ձեռ. Կարին, էջ 148:

7 **Գարեգին Ա. Կաթողիկոս,** *Յիշատակարանք ձեռագրաց,* էջ 561

8 Նոյն տեղում, էջ 565-570, **Բ. Սարգիսեան,** *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց 'ի Վենետիկ,* 1914, հտ. Ա, էջ 549-560: **Հ. Աճառեան,** *Հայոց անձնանունների բառարան,* հտ. Բ, էջ 645, հտ. Ե, էջ 81: **Ղ. Ալիշան,** *Սիսուան,* էջ 98: **S. Der-Nersessian,** *Manuscrit arméniens...,* p. 50-86.

9 **Լ. Ռ. Ազարեան,** *Կիլիկեան մանրանկարչութիւնը,* էջ 56: Այս ձեռագիրը յայտնի է «Լվովի աւետարան» անունով:

10 **Հ. Աճառեան,** *Հայոց անձնանունների բառարան,* հտ. Բ, էջ 469, **Ալիշան,** *Սիսուան,* էջ 94-95, 98:

11 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թիւ 989:

12 **Գարեգին Ա. Կաթողիկոս,** *Յիշատակարանք ձեռագրաց,* էջ 617-618:

13 **Հ. Աճառեան,** *Հայոց անձնանունների բառարան,* հտ. Բ, էջ 379 եւ 473, հտ. Դ, էջ 247: **Ղ. Ալիշան,** *Սիսուան,* էջ 101:

14 **Errol F. Rhodes, Ph.D.,** *An Annotated list of Armenian new Testament manuscripts,* Rikkyo University Ikebukuro, Tokyo, Japan, 1959, p. 32, N 215. **Լ. Ռ. Ազարեան,** *Կիլիկեան մանրանկարչութիւնը,* էջ 56, **Գարեգին քահանայ Կիրակոսեան,** *Նոր Ջուղայի մատենադարան,- «Արարատ»,* 1910, էջ 884-885:

15 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թիւ 5528:

16 **Ա. Ս. Մաթեւոսեան,** *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ,* ԺԳ. դար, Երեւան, 1984, էջ 110:

17 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թիւ 8590:

18 **Հ. Աճառեան,** *Հայոց անձնանունների բառարան, հտ.* Բ, էջ 594, Ձեռագիր Հալէպի, հտ. Ա, էջ 244:

19 **Հ. Աճառեան,** *Հայոց անձնանունների բառարան,* հտ. Բ, էջ 45, հտ. Գ, էջ 717: «Ծողակաթ», էջ 205, Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թիւ 759:

20 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թիւ 6764:

21 **Հ. Աճառեան,** *Հայոց անձնանունների բառարան,* հտ. Բ, էջ 475, **Ղ. Ալիշան,** *Սիսուան,* էջ 106:

22 **Errol F. Rhodes, Ph.D.,** *An Annotated list of Armenian,* p. 90, N 640.

23 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թիւ 2630:

24 **Հ. Աճառեան,** *Հայոց անձնանունների բառարան,* հտ. Բ, էջ 248, Ձեռ. Վասպուրականի, էջ 111-112: Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թիւ 5784:

25 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թիւ 488:

26 **Գ. Սրուանձտեանց,** *Թորոս Աղբար,* հտ. Բ, էջ 344:

27 **Հ. Աճառեան,** *Հայոց անձնանունների բառարան,* հտ. Դ, էջ 502, **Ղ. Ալիշան,** *Սիսուան, էջ 107:*

28 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թիւ 4214:

29 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թիւ 3816:

30 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թիւ 780:

31 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թիւ 2787:

32 **Ե. Լալայեան,** *Ցուցակ ձեռագրաց Վասպուրականի,* էջ 59-62:

33 **Errol F. Rhodes, Ph.D.,** *An Annotated list of Armenian,* p. 20, N 129.

34 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թիւ 5708: **Հ. Աճառեան,** *Հայոց անձնանունների բառարան,* հտ. Գ, էջ 181, 274 եւ 610: **Ե. Լալայեան,** *Ցուցակ ձեռագրաց Վասպուրականի,* էջ 171:

35 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թիւ 7157:

36 **Սամուէլի քահանայի Անեցւոյ,** *Հաւաքմունք 'ի գրոց պատմագրաց,* աշխատ. **Արշակ Տէր-Միքէլեանի,** Վաղարշապատ, 1893 էջ 225: *«Պատմութիւն վարուց Ներսիսի եպիսկոպոսին երգոցս Սաղմոսին քննօղի»*

37 **Սամուէլ Անեցի,** էջ 117:

38 **Մեսրոպ վրդ. Քէշիշեան,** *Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանի,* Վիեննա, 1964, էջ 754

39 **Մկրտիչ վրդ. Աւգերեան,** *Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց,* Վենետիկ, 1813, հտ. Ե, էջ 351:

40 **Հ. Աճառեան,** *Հայոց անձնանունների բառարան,* հտ. Բ, էջ 575:

41 **Գարեգին Ա. Կաթողիկոս,** *Յիշատակարանք ձեռագրաց,* հտ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 561:

42 **Կիրակոս Գանձակեցի,** *Պատմութիւն Հայոց,* աշխատասիրութեամբ **Կ. Ա. Մելիք-Օհանջանեանի,** Երեւան, 1961, էջ 111:

43 **Ղ. Ալիշան,** *Սիսուան,* էջ 109:

44 Նոյն տեղում, էջ 98:

45 **Ե. Լալայեան,** *Ցուցակ ձեռագրաց Վասպուրականի,* էջ 60-61:

46 *ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ,* աշխ. **Լ. Ս. Խաչիկեանի,** էջ 106, նաեւ ՄՄ, ձեռ. թիւ 2787:

47 **Սամուէլ Անեցի,** էջ 162:

48 **Գարեգին Ա. Կաթողիկոս,** *Յիշատակարանք ձեռագրաց,* էջ 527:

49 **Մ. Աւգերեան,** *Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց,* հտ. Ե, էջ 344-351:

50 **Հ. Աճառեան,** *Հայոց անձնանունների բառարան,* հտ. Դ, էջ 46:

51 **Սմբատ Սպարապետ,** *Տարեգիրք,* Վենետիկ, 1956, էջ 209:

52 **Ղ. Ալիշան,** *Սիսուան,* էջ 106, **Հ. Աճառեան,** *Հայոց անձնանունների բառարան,* հտ. Գ, էջ 340, **Գ. Զարբհանալեան,** *Թարգմ.,* էջ 156, **Ղ. Ալիշան,** *Հայապատում,* էջ 495, «Տաթեւ», 1927, էջ 188:

© National Library of Armenia

53 Ղ. Ալիշան, *Սիսուան*, էջ 106, Հ. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Դ, էջ 628:

54 «Էջմիածին», 1972, էջ 57-65 (տե՛ս Ասատուր Մնացականեանի յօդուածը):

55 Սամուէլ Անեցի, էջ 226:

56 Նոյն տեղում, էջ 239:

57 Կուկլակի կիրճի Մեզար-օլուք գիւղը տարանցիկ ճանապարհի վրայ գտնւում է 66-րդ կմ-ում:

Համրուն (Համրոն) Բերդի մօտաւոր մէկ բրօֆին.



Նկ.1



Նկ. 2

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԱՌԻՆՋ ԳԻՒՂԸ ԵՒ ՆՐԱ ՎԻՄԱԿԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Ռուբէն Գասպարեան

Առինջ գիւղը գտնուել է Այրարատեան նահանգի Կոտայք գաւառում: Ըստ Ղեւոնդ Ալիշանի՝ «Հեռի իբր քառորդաւ ժամու յԱւանայ, ի հս նորին առ արքունի պողոտային կայ Առինճ գիւղ Հայոց իբր 65 տանց»[1]: Սկզբնաղբիւրներում գիւղը յիշատակւում է XIII դարից: Կեչառիսի գաւթի ՈԾԵ (1206) թուականի արձանագրութեան համաձայն՝ ոմն Հայրաձայնն իր պատրոն՝ Զաքարեան Իւանէի գործակալ, իշխանաց իշխան Բուբայից գնել եւ վանքին է նուիրել Առինջք գիւղից մի այգի: Սանահնի եւ Հայրավանքի ՈԿ (1211) թ. արձանագրութիւնների համաձայն՝ իր տիրոյթից նման մի նուիրատուութիւն է կատարել նաեւ Բուբայը[2]: Հր. Աճառեանը տեղանուան մասին գրում է. «Առիճ կամ Առինճ գիւղ առանձին չէ գործածուած, բայց կայ մի խումբ հին տեղական յատուկ անունների մէջ. Բագայառինճ, Գուկառինճ, Խոկառինճ: Ըստ Աճառեանի՝ բառի ամբողջական ձեւն է առիճ, որ գործածւում է մի քանի անջատ ձեւով. Արջոյ առիճ, խաղտոյ առիճ: Ինչպէս Աւան անունը լինելով հասարակ անուն, գործածուել է որպէս յատուկ անուն, այնպէս էլ Հառինճը դարձել է յատուկ անուն[3]:

Բնակավայրի տարածքում պահպանուած ճարտարապետական յուշարձանները եւ խաչարձանների վիմական յիշատակագրերը վկայում են, որ այն X-XII դդ. եղել է կրթութեան եւ մշակոյթի կենտրոն: Առինջ գիւղի միջնադարեան նշանաւոր ճարտարապետական կառոյցներից է հիւսիսային մասում՝ մերձակայ բլրի գագաթին, գտնուող դիտարժան «ամրոցը», որն իշխում է ոչ միայն գիւղի, այլեւ շրջակայ տարածքի՝ Աւանի եւ Քանաքեռի ընդգրկուն համայնապատկերի վրայ: Այն յօրինուածքով քառակուսի յատակագծով, բաւականին մեծ կառոյց է, որի հարաւային եւ արեւելեան պատերը նախկինում խորտակուած են եղել, իսկ այժմ այն վերականգնել եւ ողջ կառոյցի հիմքերը ամրացրել է առինջեցի բարերար Գագիկ Ծառուկեանը: «Ամրոցի» մուտքը հարաւարեւելեան կողմից է, որի բարաւորին ներքուստ քանդակուած են իրար փաթաթուած վիշապներ: Հիւսիսային կողին փորագրուած է երեք տող արձանագրութիւն. Տ[Է]Ր - ՍԱՆՎԷԼ ՔԱՐԳՈՐԾ ՈՐԴԻ Տ[Է]Ր ՅՈՎԱՆԷՍԻՆ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ: ԹՎԻՆ ՋԾ *(1501)[4]:*

«Ամրոցի» հիմնապատերի ստորին հատուածը շարուած է առանց շաղախի, կոպտատաշ հաստաբուն բազալտէ մեծ քարերով, որի վրայ 2 մետրից աւելի բարձրանում են կրաշաղախով հաստ պատեր: Հիւսիսարեւելեան եզրին՝ հիմնաշարի բազալտէ քարի հիւսիսային կողին, կայ մեծ տառերով մի մակագրութիւն. ՀԻՄՆ[ԵՑԱԻ]: ՋԼԷ: (1488) ԹՎԻՆ: *Նոյն քարի արեւելեան կողին եւս մէկ թուական՝ երկտող գրութեամբ.* ԹՎ. ՋԽԱ: *(1492)* ԶՎԱ[Ր]ԴՊ[Ե]Տ ԽԱՉԱՏՈՒՐ, ՅԻՇԵՑԵՔ Ի ՔՍ[5]: *Ուսումնասիրողներից Ս. Սաղումեանը գտնում է, որ դրանք չինութեան կառուցման սկզբի եւ աւարտի թուականներն են[6]: Գորշակարմրաւուն մեծ տուֆի վրայ՝ նախորդից մի փոքր հեռու, փորագրուած է եւս մէկ արձանագրութիւն՝ ոմն Խաչատուր միայնակեացի անունով.* ԽԱՉԱՏՈՒՐ ՄԻԱ[Ց]ՆԱԿԵԱՑ, ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ[7]:

© National Library of Armenia